ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Մարտնչող Արցախը 1917-2000 թթ., գիրք Գ (1985-2000), Դիզակ պլյուս հրատարակչություն, Ստեփանակերտ, 2007, 744 էջ:

Հայոց նորագույն պատմության մեջ արցախահայության պատմությունը իրավամբ կայուն տեղ ունի: Արցախահայության պատմության մի շրջափուլի վերլուծությանն է նվիրված պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանի «Մարտնչող Արցախը» շարքի երրորդ գիրքը, որն ընդգրկում է Արցախի 1985-2000 թթ. ազատագրական պայքարի պատմությունը: Այստեղ հեղինակը լայնորեն օգտագործել է Հայաստանի ազգային և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվների նյութերը, ժամանակի մամուլը և հրապարակված գրքերը: Հարկ է նշել, որ հեղինակն իր այս ուսումնասիրությունում ներդրել է իր ողջ ունակություններն ու կարողությունները, իր հոգսերն ու ցավերը, ապագայի նկատմամբ իր հույսերն ու ձգտումները: Տքնաջան և սրտացավ աշխատանքի շնորհիվ հեղինակը հասել է իր նպատակին՝ ընթերցողի սեղանին դնելով մի ամբողջական երկ, որը, ըստ էության, առաջինն է պատմագրության մեջ:

Հ. Աբրահամյանի այս ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, վեց գլխից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Ուսումնասիրության մեջ հանգամանորեն քննարկվել են Արցախի պատմության 15-ամյա ժամանակահատվածի՝ ազատագրական պայքարի, Արցախի հանրապետության ստեղծման, ձեռնարկված քայլերի, երկրամասի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի հիմնահարցերը:

Հ. Աբրահամյանի ուսումնասիրության գիտական նորույթը արցախահայության 1985-2000 թթ. ազգային-ազատագրական պայքարի ամբողջական պատմության հետազոտումն է: Հեղինակը, օգտագործելով արխիվային հարուստ նյութեր և դրանք շրջանառության մեջ դնելով առաջին անգամ, ժամանակի մամուլը և հրապարակված բազմաթիվ գրքեր, դիտարկում է մի շարք խնդիրներ և առաջին անգամ ամբողջացնում Արցախի երկրամասում կատարված իրա-դարձությունների շղթան:

Հ. Աբրահամյանի գրախոսվող աշխատության առաջին գլուխը նվիրված է 1985-ից մինչև 1988-ի գարունը արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր վերելքի նկարագրությանը, ինչպես նաև հանգամանորեն շարադրված է պայքարի սկզբնավորման պատմությունը: Հեղինակը հավաստի նյութերի հիման վրա ապացուցում է, որ Արցախյան շարժումը սկսվել է ոչ թե 1988-ի փետրվարից, ինչպես այդ մասին ակնարկում են շատերը, այլ 1985-ին՝ գորբաչովյան «վերակառուցման» շրջանում: Հենց այդ ժամանակ է Լեռնային Ղարաբաղում սկսվել ստորագրահավաքը, իսկ 1987-ի նոյեմբերի վերջին ամբողջ փաթեթը ներկայացվել ԽՄԿԿ Կենտկոմ: Նշենք նաև, որ մինչև հիմա պատշաճ և ստույգ խոսք չի ասվել 1988-ի փետրվարի 20-ին տեղի ունեցած իրադարձությունների մասին: Այդ օրը, մինչև երեկոյան մարզային խորհրդի նստաշրջանի հրավիրումը, մարզում տեղի են ունեցել խիստ լարված իրադարձություններ՝ Ստեփանակերտի քաղխորհրդի արտահերթ նստաշրջանի և մարզային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահության նիստի հրավիրում, վերջինիս կողմից մարզխորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջի մերժում, Լենինի անվան հրապարակում հավաքված ավելի քան 50 հազար բնակչության պահանջը նստաշրջան հրավիրելու մասին և այլն: Այնուամենայնիվ, փետրվարի 20-ի երեկոյան հրավիրված մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանի ընդունած որոշումը, ըստ էության, նոր ուղի բացեց հայ ժողովրդի ազատագրական

պայքարի պատմության մեջ: Այնուհետև Շարժումը թե՛ Արցախում և թե՛ Հայաստանում ընդունեց համաժողովրդական բնույթ, որը աշխատության մեջ շարադրված է հանգամանորեն և տրամաբանորեն:

Հեղինակը միևնույն ժամանակ քննադատական խոսք է ասում նրանց, ովքեր փորձում են աղավաղել փաստերն ու իրադարձությունները և ազատագրական պայքարի օբյեկտիվ ընթացքը թեքել այլ հարթություն: Հեղինակը մերկացնում է «սումգայիթ» կազմակերպողներին և այն բնորոշում որպես բացահայտ ցեղասպանություն:

Ուսումնասիրության երկրորդ գլուխը նվիրված է 1988-ի գարնանից մինչև 1991-ի սեպտեմբերի սկիզբը տեղի ունեցած իրադարձությունների նկարագրությանը: Հեղինակը հստակ ուշադրություն է դարձրել այդ ժամանակ Արցախում սահմանադրական ուղիով երկրամասում հանրապետություն ստեղծելու համար տարված պայքարի վերլուծությանը: Որ 1988-ի հուլիսի 18-ին տեղի ունեցած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած որոշումը բացահայտորեն մերժեց հայ ժողովուրդը, հիմնավորված է ուսումնասիրության մեջ: Այդ որոշումը ավելի սրեց պայքարը Արցախ-Հայաստանում և վերամիավորման համազգային շարժումը մղեց նոր հարթություն, բարձրացրեց նոր աստիճանի:

Պատմական իրադարձությունների ֆոնի վրա երևան եկած թուրք-ազերական հանրապետությանը որպես պատասխան և ելնելով ԽՍՀՄ-ում ընդունված համապատասխան որոշումներից՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որի ստեղծման մանրամասները, արխիվային նյութերի հիման վրա, նկարագրված են հանգամանորեն:

Հ. Աբրահամյանի ուսումնասիրության երրորդ գլխում նկարագրված են հաջորդ՝ 1991-ի սեպտեմբերից մինչև 1992-ի մայիս տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, երբ Արցախի տարածքում բուն դրած ավելի քան 40 թուրք-ազերական բնակավայրեր, ներառյալ՝ Շուշի քաղաքը, ազատագրվեցին և վերադարձվեցին տերերին՝ արցախահայությանը: Հեղինակի ուշադրության կենտրոնում են ԼՂՀ կայացման գործընթացը և դրան առնչվող մի շարք հարցեր: Արցախահայությունը, դիմագրավելով հակառակորդի նոր ճնշումներին, միևնույն ժամանակ հավաքագրում է իր ուժերը և ստեղծում ազգային բանակ, որի մասին խոսվում է հանգամանորեն: Հայաստանից անջատված և աշխարհից կտրված Լեռնային Ղարաբաղի համար կենսական խիստ անհրաժեշտություն էին Շուշիի ազատագրումը և Մայր Հայաստանի հետ ցամաքային կապի հաստատումը: Այդ պատմական մեծագույն նշանակություն ունեցող գործողությունն իրագործվեց նվազագույն զոհերով: Գեներալ Արկադի Տեր-Թադևոսյանը, որը գլխավորում էր այդ գործողությունները, լուծեց մի գերխնդիր, որը աշխատության մեջ ստացել է պատշաճ գնահատական: Հեղինակը ամենաջերմ խոսքերով է պատմում թե՛ նրա և թե՛ մյուս զորահրամանատարների, մարտնչող մարտիկների ու կամավորների մասին:

Կատաղած հակառակորդը փորձում էր վրեժխնդիր լինել և բնաջնջել Արցախ-Ղարաբաղը: Նորանոր ուժեր կենտրոնացնելով և ուղղելով հանրապետության դեմ՝ ներխուժում էր երկրամաս:

Հեղինակը իր ուսումնասիրության չորրորդ գլուխը ամբողջովին նվիրել է 1992 թ. ամառվանից մինչև 1994 թ. մայիսը տեղի ունեցած ռազմական գործողությունների նկարագրությանը, որի հետևանքով հայ ազատագրական ուժերին հաջողվում է ազատագրել ոչ միայն հակառակորդի զավթած տարածքները, այլև ազատագրել հարակից յոթ շրջաններից մի շարք տարածքներ, որոնք պատմականորեն եղել են Արցախի տարածք: Հեղինակը համոզիչ ազերի քարոզչության այն ստահոդ պնդումները, թե իբր, իրենք ունեն մեկ միլիոն փախստական, և Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը բռնագրավել են հայկական ուժերը: Հեղինակը ցույց է տալիս, որ իրականում հայ ազատագրական ուժերի հսկողության

տակ է անցել հանրապետության տարածքի մոտ 10 տոկոսը, որտեղից հեռացել է 350 000 մարդ (էջ 674):

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ուսումնասիրության հինգերորդ գլուխը՝ □Արցախի բարդույթը աշխարհաքաղաքական հորձանուտներում□: Այստեղ արխիվային հարուստ նյութերի հիման վրա բացահայտված են Ադրբեջանի հայության բռնագաղթի սարսափները և ողբերգական հետևանքները: Ապա հանգամանորեն խոսվում է կամավորական ջոկատներից մինչև պաշտպանական բանակի ստեղծման, արցախյան շարժման և հայ հասարակական-քաղաքական ուժերի, հայ կնոջ և արցախյան շարժման մասին, ինչպես նաև անդրադարձը Սփյուռքում և արտասահմանյան երկրներում արցախյան շարժման արձագանքներին ու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի միջազգայնացման հարցերին:

Աշխատության վերջին՝ վեցերորդ գլուխն ընդգրկում է 1994-2000 թթ. ԼՂՀ սոցիալ-տնտեսական, հասարակական և քաղաքական կյանքի վերլուծությունը: Արցախի հանրապետությունում հետպատերազմյան տարիներին իրագործվել են բազմաթիվ խնդիրներ՝ հողի սեփականաշնորհումից մինչև ձեռնարկությունների սեփականաշնորհում, երկրամասի քայքայված տնտեսության վերականգնում, Հայաստանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացում և այլն: Այդ ժամանակաշրջանում հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի նկարագրությունը նույնպես տեղ է գտել ուսումնասիրության մեջ: Իսկ վերջաբանը, որը հեղինակի հոգու խոսքն է, պակաս հետաքրքրություն չի ներկայացնում:

Հեղինակը աշխարհին հարցնում է. ո՞վ է տեսել, որ 14 տարեկան պատանին լինի տանկի հրամանատար: Եվ հպարտությամբ պատասխանում է. դա եղել է Արցախում, հայոց հողում, որտեղ 150 անչափահասներ հերոսաբար մարտնչել են թշնամու դեմ՝ զենքը ձեռքին: Հեղինակը երիցս ճիշտ է, երբ գրում է. «Հաղթանակը հենց այնպես չի գալիս, այն կերտվում է մարդկանց արյամբ, մեծ դժվարությամբ, երբ կա ազգի միասնություն, համաժողովրդական պայքար, երբ իշխում է հաղթանակի ոգին»: Եվ իրոք, «Արցախը դարձավ խորհրդային կայսերապետության խորտակման համար պայքարողների առաջնեկներից մեկը» (էջ 727) հենց իր հերոսական պայքարով:

Իր ամբողջության մեջ շահեկան լինելով հանդերձ՝ գրախոսվող գիրքը զեղծ չէ որոշ թերություններից: Իրոք, գիրքը ընթերցվում է սահուն, չնայած տեղ են գտել սրբագրական բնույթի սպրդումներ: Գիրքն ավելի կշահեր, եթե ներառվեին անվանումների և տեղանունների ցուցակներ, օգտագործվեին Հայաստանի և Արցախի հանրապետությունների պաշտպանության նախարարությունների արխիվներում պահվող որոշ նյութեր, իսկ հուշագրություններն օգտագործվեին ավելի ընտրովի և այլն: Ամփոփումը և որոշ լուսանկարների զետեղումը նույնպես անհրաժեշտ էին:

Նշված թերություններով հանդերձ՝ պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանի գրախոսվող աշխատությունը, որը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար, լուրջ ներդրում է հայ ժողովրդի և Արցախի նորագույն պատմության մեջ: Գրքի ճանաչողական արժեքը առավել մեծ կլինի, եթե հրատարակվի ռուսերեն և անգլերեն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ. Ա.
Պատմական գիտությունների դոկտոր